ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

31-ը դեկտեմբերի 2023թ.

Շնորհավորական ուղերձ Ամանորի և Սուրբ Ծնունդի կապակցությամբ

Աբովյան համայնքի հարգելի՛ բնակիչներ.

Ավարտին է մոտենում 2023 թվականը, որը մեր համայնքում հատկանշվեց մաշտաբային և կարևոր մի շարք աշխատանքների իրականացմամբ: Համայնքապետարանի նախաձեռնությամբ, ինչպես նաև բնակիչ-համայնք, համայնք-պետություն արդյունավետ համագործակցություններով անցնող տարում կյանքի կոչեցինք կառուցապատման և բարեկարգման բազում ծրագրեր: Աշխատանքային ակտիվությանն ու առաջընթացին զուգահեռ՝ մենք միասնաբար հաղթահարեցինք մեր առջև ծառացած մի շարք մարտահրավերներ: Կարևոր եմ համարում արձանագրել, որ Արցախի բռնի հայաթափումը ծանր ու ցավալի իրադարձություն էր յուրաքանչյուրիս համար, սակայն մենք, չընկրկելով դժվարությունների առջև, համախմբված կազմակերպեցինք բռնի տեղահանված մեր հայրենակիցների հաշվառման, կարիքների գնահատման և աջակցությունների տրամադրման ծավալուն աշխատանքները:

Հակառակ ստեղծված դժվարին իրավիճակին՝ ուզում եմ տարեմուտին ընդառաջ մեր բոլոր հայրենակիցները զինվեն լավատեսությամբ, նոր ուղիներ հարթելու պատրաստակամությամբ և պայքարելու, առաջ շարժվելու հաստատակամությամբ:

Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ առաջին հերթին ջերմորեն շնորհավորում եմ առաջնագծում մեր հայրենիքի սահմաններն անառիկ պահող զինծառայողներին, մաղթում եմ խաղաղություն, քաջառողջություն, զգոն և անվտանգ ծառայություն:

Սիրելի՛ հայրենակիցներ, Աբովյան համայնքի հարգելի՛ բնակիչներ.

Մենք մուտք ենք գործում 2024 թվական՝ Աբովյան համայնքը զարգացնելու, բարեկարգելու նոր ծրագրերով, ձեզ հետ միասին էլ ավելին անելու պատրաստակամությամբ ու դրական միտումներով:

Ամենաջերմ և ընտանեկան տոների կապակցությամբ շնորհավորում եմ բոլորիդ, թող որ գալիք տարում խաղաղություն և առաջընթաց հաստատվեն մեր հայրենիքում, առողջություն, երջանկություն և ներդաշնակություն տիրեն ձեր ընտանիքներում և իրականանան տարեմուտին մտապահված նվիրական երազանքները:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ